

Գլխավոր տեղեկություն

Համար	թիվ 07-Ն
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Հիմնական ակտ (25.03.2010-05.01.2012)
Կարգավիճակ	Չի գործում
Սկզբնաղբյուր	ՀՀՊՏ 2010.03.17/11(745) Հոդ.63
Ընդունող մարմին	Վիճակագրության պետական խորհուրդ
Ընդունման ամսաթիվ	25.01.2010
Ստորագրող մարմին	Վիճակագրության պետական խորհրդի Նախագահ
Ստորագրման ամսաթիվ	25.01.2010
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	25.03.2010
Ուժը կորցնելու ամսաթիվ	05.01.2012

«Գրանցված է»ՀՀ արդարադատության
Նախարարության կողմից

26 փետրվարի 2010 թ.

Պետական գրանցման թիվ 60310117

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**25 հունվարի 2010 թ.
ք. Երևան

թիվ 07-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ**«ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏԵՐԻ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՁԵՎ ԹԻՎ 6-Ֆ (ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ) ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Պեկավարվելով «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի ե) կետով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը **որոշում է.**

1. «Հաշվետվություն կազմակերպության դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, բանկային վարկերի և փոխառությունների վերաբերյալ» Ձև թիվ 6-Ֆ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը՝ համաձայն հավելված 1-ի:

2. «Հաշվետվություն կազմակերպության դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, բանկային վարկերի և փոխառությունների վերաբերյալ» Ձև թիվ 6-Ֆ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևի լրացման հրահանգը՝ համաձայն հավելված 2-ի:

Հավելված 1
ՀՀ վիճակագրության
պետական խորհրդի
2010 թվականի հունվարի 25-ի
թիվ 07-Ն որոշման



ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է համաձայն՝ «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության 2000թ. ապրիլի 4-ի ՀՕ-48 օրենքի, օրենքով սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատվող «Պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրի» և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2003թ. հոկտեմբերի 3-ի «Վիճակագրական տեղեկությունների ներկայացման կարգը հաստատելու մասին» թիվ 11-Ն որոշմամբ հաստատված կարգի

ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՏԵՐԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՐՏՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ Ե ՕՐԵՆՔՈՎ

Ներկայացվում է	Ներկայացնում են	Հաշվետվության ներկայացման ժամկետը՝
1. Ազգային վիճակագրական ծառայություն 2. Ազգային վիճակագրական ծառայության մարզային գործակալություն (տարածքային բաժին)	Հայաստանի Հանրապետության առևտրային կազմակերպությունները	I, II և III եռամսյակների համար՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ը, IV եռամսյակի համար՝ ոչ ուշ, քան հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը:
Ով է ներկայացնում _____ (անվանումը)		Ձեռ. թիվ 6-Ֆ (եռամսյակային)
Փաստացի գործունեության հիմնական տեսակը _____		«Հաստատված է»
Գտնվելու վայրը _____	(փոստային դասիչ) _____	Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 25 հունվարի 2010թ. թիվ 07-Ն որոշմամբ
Մարզը _____ Համայնքը _____		Չլրացնել
Պետական ռեգիստրում գրանցման համարը		ՏՊՏՀԴ
Նույնականացման (իդենտիֆիկացիոն) ծածկագիրը		Մարզը
Հարկ վճարողի հաշվառման համարը		Համայնքը
Պետական ռեգիստրում գրանցման համարը և նույնականացման (իդենտիֆիկացիոն) ծածկագիրը լրացվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրված գրանցման վկայականից		
Պետական վիճակագրության մասին օրենսդրության խախտումը վիճակագրական տեղեկություններ տրամադրողների, ինչպես նաև պետական վիճակագրություն իրականացնող մարմնի պաշտոնատար անձանց համար առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:		

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 20 թ. _____ եռամսյակի վերջի դրությամբ

1. Դեբիտորական և կրեդիտորական պարտքեր, բանկային վարկեր և փոխառություններ

հազար դրամ (ամբողջ թվերով)

Ցուցանիշների անվանումը	Տողի ծածկագիրը	Նախորդ տարվա վերջի մնացորդը	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը
1	2	3	4
Դեբիտորական պարտքեր, ընդամենը (տող110+տող120+տող130+տող140)	100		
- որից՝ ժամկետանց	101		
Ընդամենը դեբիտորական պարտքերից՝ պարտքեր վաճառքների գծով	110		
- որից՝ ժամկետանց	111		
տրված ընթացիկ կանխավճարներ	120		
- որից՝ ժամկետանց	121		
պարտքեր բյուջեի գծով	130		
- որից՝ ժամկետանց	131		
այլ դեբիտորական պարտքեր	140		
- որից՝ ժամկետանց	141		
Կրեդիտորական պարտքեր, ընդամենը (տող210+տող220+տող230+տող240+տող250)	200		

- որից՝ ժամկետանց	201		
Ընդամենը կրեդիտորական պարտքերից՝			
պարտքեր գնումների գծով	210		
- որից՝ ժամկետանց	211		
ստացված ընթացիկ կանխավճարներ	220		
- որից՝ ժամկետանց	221		
պարտքեր բյուջեին	230		
- որից՝ ժամկետանց	231		
պարտքեր աշխատավարձի և աշխատակիցներին այլ կարճաժամկետ հատկացումների գծով	240		
- որից՝ ժամկետանց	241		
այլ կրեդիտորական պարտքեր (ներառյալ պարտադիր սոցիալական ապահովագրության գծով և մասնակիցներին պարտքերը)	250		
- որից՝ ժամկետանց	251		
Պարտքեր բանկերի վարկերի և փոխառությունների գծով, ընդամենը (տող310+տող320)	300		
- որից՝ ժամկետանց	301		
այդ թվում՝			
ՀՀ ռեզիդենտներին	310		
- որից՝ ժամկետանց	311		
ՀՀ ոչ ռեզիդենտներին	320		
- որից՝ ժամկետանց	321		
Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված դեբիտորական պարտքեր (տարվա սկզբից, աճողական կարգով)	400	X	
Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված կրեդիտորական պարտքեր (տարվա սկզբից, աճողական կարգով)	500	X	

Սույն հաշվետվության իմաստով, ՀՀ ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, տնային տնտեսությունը, իրավաբանական անձը կամ ՀՀ տարածքում գործող որևէ այլ կազմակերպություն, որի մշտական գտնվելու վայրը (ֆիզիկական անձանց համար բնակության վայրը) կամ տնտեսական շահերի կենտրոնը (ֆիզիկական անձանց համար՝ կենսական շահերի կենտրոնը) հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը:

2. Դեբիտորական և կրեդիտորական պարտքերն ըստ երկրների

Անվանումը	Տողի ծածկագիրը	Դեբիտոր- ական պարտքեր	հազար դրամ (ամբողջ թվերով)		
			որից՝ ժամկետանց	կրեդիտոր- ական պարտքեր	որից՝ ժամկետանց
1	2	3	4	5	6
Ընդամենը (տող700+տող800+տող900+ տող1000)	600	=տող 100 (սյուն 4)	=տող 101 (սյուն 4)	=տող 200 (սյուն 4)	=տող 201 (սյուն 4)
այդ թվում՝					
Հայաստան	700				
ԱՊՀ երկրներ, ընդամենը	800				
այդ թվում՝					
Ադրբեջան	801				
Բելառուս	802				
Ղազախստան	803				
Ղրղզստան	804				
Մոլդովա	805				
Ռուսաստանի Դաշնություն	806				
Տաջիկստան	807				
Թուրքմենիա	808				
Ուզբեկստան	809				
Ուկրաինա	810				
ԵՄ երկրներ	900				
որից՝					
Ավստրիա	901				

Բելգիա	902				
Ֆրանսիա	903				
Ֆինլանդիա	904				
Գերմանիա	905				
Նիդեռլանդներ	906				
Իռլանդիա	907				
Միացյալ Թագավորություն	908				
Իտալիա	909				
Հունաստան	910				
Շվեդիա	911				
Դանիա	912				
Լյուքսեմբուրգ	913				
Իսպանիա	914				
Բուլղարիա	915				
Ռումինիա	916				
Լատվիա	917				
Լիտվա	918				
Էստոնիա	919				
Այլ երկրներ	1000				
որից՝					
Իրան	1001				
Իսրայել	1002				
Թուրքիա	1003				
Միացյալ Արաբական Էմիրություններ	1004				
ԱՄՆ	1005				
Չինաստան	1006				
Ճապոնիա	1007				
Շվեյցարիա	1008				
Վրաստան	1009				

Կազմակերպության ղեկավար՝

անուն, ազգանուն

ստորագրություն

Կատարող՝ (գլխավոր հաշվապահի
կամ այլ լիազորված անձ)

պաշտոնը

անուն, ազգանուն

ստորագրություն

Հեռախոս՝

Էլ. փոստ՝

"-----"20 թ.

Հավելված 2
ՀՀ վիճակագրության
պետական խորհրդի
2010 թվականի հունվարի 25-ի
թիվ 07-Ն որոշման

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

«ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԶԵՎ ԹԻՎ 6-Ֆ» ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հրահանգը սահմանում է «Հաշվետվություն կազմակերպության ղեբիտորական և կրեդիտորական պարտքերի, բանկային վարկերի և փոխառությունների վերաբերյալ» (ձև թիվ 6-Ֆ) պետական վիճակագրական հաշվետվության (այսուհետ՝ հաշվետվություն) լրացման կարգը:

2. Հաշվետվությունը ներկայացնում են Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից ընտրանքային կարգով ընտրված կազմակերպությունները (այսուհետ՝ կազմակերպություններ), որոնք նախապես տեղեկացվում են վիճակագրական մարմինների կողմից:

3. Հաշվետվությունը ներկայացվում է դրանում նշված ժամկետներում:

4. Հաշվետվությունում ներառվում են կազմակերպության բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության ցուցանիշները:

5. Կազմակերպությունները հաշվետվությունները կազմում են եռամսյակային պարբերականությամբ: Հաշվետվությունում լրացվում են հաշվետու եռամսյակի վերջի դրությամբ մնացորդները:

6. Հաշվետվության լրացման համար հիմք են հանդիսանում հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված նորմերը, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:

7. Վիճակագրական տեղեկությունների ներկայացման հետ կապված այլ խնդիրները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

II. ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Հաշվետվությունը կազմված է 2 բաժնից՝

1) «Դեբիտորական և կրեդիտորական պարտքեր, բանկային վարկեր և փոխառություններ»,

2) «Դեբիտորական և կրեդիտորական պարտքերն ըստ երկրների»:

III. ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ ԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9. Բաժինն ամփոփում է առևտրային կազմակերպությունների, տնտեսության մյուս հատվածների ու արտաքին աշխարհի միջև բոլոր տեսակի հաշվարկների մասին տեղեկատվությունը:

10. «Դեբիտորական պարտքեր, ընդամենը» տողում (100) և «Կրեդիտորական պարտքեր, ընդամենը» տողում (200) ցույց են տրվում կազմակերպության դեբիտորական և կրեդիտորական պարտքերի՝ նախորդ տարվա վերջի (սյունակ 3) հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի (սյունակ 4) մնացորդները:

11. Առանձին տողերով (101 և 201) ցույց են տրվում նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերում ներառված ժամկետանց դեբիտորական և կրեդիտորական պարտքերը:

12. ԸՆԴԱՄԵՆՆԸ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻՑ՝

1) «Պարտքեր վաճառքների գծով» տողում (110) ցույց է տրվում արտադրանքի, ապրանքների վաճառքների, մատուցած ծառայությունների, կատարած աշխատանքների, ինչպես նաև այլ պաշարների, ֆինանսական ներդրումների, հիմնական միջոցների և այլ ակտիվների վաճառքների գծով առաջացած դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը (221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով» և 223 «Վաճառքների և այլ եկամուտների գծով դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ» (վաճառքների գծով դեբիտորական պարտքերին վերաբերող մասով) հաշիվների մնացորդների տարբերությունը):

2) «Տրված ընթացիկ կանխավճարներ» տողում (120) ցույց են տրվում ընթացիկ ակտիվների ձեռքբերման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման համար տրված կանխավճարների գումարները (224 «Տրված ընթացիկ կանխավճարներ» հաշիվի մնացորդը):

3) «Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով» տողում (130) ցույց են տրվում բյուջե ավելի վճարված (փոխհատուցման ենթակա) գումարները (225 «Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով» հաշիվի մնացորդը):

4) «Այլ դեբիտորական պարտքեր» տողում (140) ցույց են տրվում գործառնական վարձակալության, ստացվելիք շահաբաժինների, սկզբնական արժեքով հաշվառվող պարտքային արժեթղթերի դիմաց ստացվելիք տոկոսների, ապահովագրական հատուցումների, տույժերի, տուգանքների, նյութական վնասի փոխհատուցման, այլ եկամուտների, աշխատավարձի վճարման, աշխատակիցների հետ այլ գործառնականությունների, բողոքարկումների գծով դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը (222 «Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով», 229 «Այլ ընթացիկ դեբիտորական պարտքեր» հաշիվների մնացորդների հանրագումարի և 223 «Վաճառքների և այլ եկամուտների գծով դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ» (այլ եկամուտների գծով դեբիտորական պարտքերին վերաբերող մասով) հաշիվի մնացորդի տարբերությունը):

5) Առանձին տողերով (111, 121, 131 և 141) ցույց են տրվում նաև վերոնշյալ դեբիտորական պարտքերում ներառված ժամկետանց դեբիտորական պարտքերը:

13. ԸՆԴԱՄԵՆՆԸ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻՑ՝

1) «Պարտքեր գնումների գծով» տողում (210) ցույց է տրվում հումքի, նյութերի, ապրանքների գնումների, ստացված ծառայությունների, ընդունված աշխատանքների, ինչպես նաև ֆինանսական ակտիվների, հիմնական միջոցների և այլ ակտիվների գնումների գծով կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը (521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» հաշիվի մնացորդը):

2) «Ստացված ընթացիկ կանխավճարներ» տողում (220) ցույց է տրվում գնորդներից և պատվիրատուներից արտադրանքի, ապրանքների, այլ ակտիվների մատակարարման, ինչպես նաև աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման և գործառնական վարձակալության համար ստացված կանխավճարների գումարը (523 «Ստացված կանխավճարներ» հաշիվի մնացորդը):

3) «Պարտքեր բյուջեին» տողում (230) ցույց է տրվում բյուջե վճարման ենթակա հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների, ինչպես նաև դրանց գծով հաշվարկված տույժերի, տուգանքների գծով կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը (524

«Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին» հաշվի մնացորդը):

4) «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով» տողում (240) ցույց է տրվում կազմակերպության աշխատակիցներին աշխատավարձի և այլ կարճաժամկետ հատուցումների գծով կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը (527 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով» հաշվի մնացորդը):

5) «Այլ կրեդիտորական պարտքեր (ներառյալ պարտադիր սոցապահովագրության գծով և մասնակիցներին պարտքերը)» տողում (250) ցույց են տրվում պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների, ինչպես նաև դրանց գծով հաշվարկված տույժերի, տուգանքների գծով կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը (525 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով» հաշվի մնացորդը), մասնակիցների (հիմնադիրների) հետ կանոնադրական կապիտալում մասնակցության դիմաց ստացվող եկամուտների (շահաբաժինների) գծով կարճաժամկետ կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը (529 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին)» հաշվի մնացորդը) և գործառնական վարձակալության, տույժերի, տուգանքների, ապահովագրավճարների, ձեռք բերված ձեռնարկատիրական գործունեության, աշխատակիցներին առհաշիվ տրված գումարների, աշխատակիցներին այլ գործառնությունների գծով կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը (528 «Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին այլ գործառնությունների գծով» և 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ» հաշիվների մնացորդների հանրագումարը):

6) Առանձին տողերով (211, 221, 231, 241 և 251) ցույց են տրվում նաև վերոնշյալ կրեդիտորական պարտքերում ներառված ժամկետանց կրեդիտորական պարտքերը:

7) «Պարտքեր բանկերի վարկերի և փոխառությունների գծով, ընդամենը» տողում (300) ցույց են տրվում երկարաժամկետ և կարճաժամկետ բանկային վարկերի և փոխառությունների գծով վճարվելիք գումարների հաշվեկշռային արժեքը, որից առանձնացվում են նաև ժամկետանց (301) պարտքերը:

8) «ՀՀ ռեզիդենտներին» տողում (310) ցույց է տրվում երկարաժամկետ և կարճաժամկետ բանկային վարկերի և փոխառությունների գծով ՀՀ ռեզիդենտներին վճարվելիք գումարների հաշվեկշռային արժեքը, որից առանձնացվում են նաև ժամկետանց (311) պարտքերը:

9) «ՀՀ ոչ ռեզիդենտներին» տողում (320) ցույց է տրվում երկարաժամկետ և կարճաժամկետ բանկային վարկերի և փոխառությունների գծով ՀՀ ոչ ռեզիդենտներին վճարվելիք գումարների հաշվեկշռային արժեքը, որից առանձնացվում են նաև ժամկետանց (321) պարտքերը:

10) «Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված դեբիտորական պարտքեր (տարվա սկզբից աճողական կարգով)» տողում (400) ցույց են տրվում հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված դեբիտորական պարտքերը (հաշիվ 941 «Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված դեբիտորական պարտքեր»):

11) «Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված կրեդիտորական պարտքեր (տարվա սկզբից աճողական կարգով)» տողում (500) ցույց են տրվում հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված կրեդիտորական պարտքերը (հաշիվ 942 «Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված կրեդիտորական պարտքեր»):

IV. ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐՆ ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ

14. Այս բաժնի լրացման ժամանակ պետք է հաշվի առնել, որ 600-րդ տողի 3, 4, 5 և 6-րդ սյունակների տվյալները պետք է հավասար լինեն, համապատասխանաբար, 100, 101, 200, 201-րդ տողերի 4-րդ սյունակների տվյալներին: